ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«27» 06 2014 թ.

< 7-1048

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան,

Ի պատասխան Ձեր 2014 թվականի հունիսի 13-ի թիվ 02/12.10/9311-14 գրության՝ Ձեզ ենք ուղարկում «ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Ռուսաստանի Դաշնության տարածքում ՀՀ քաղաքացիների և ՀՀ տարածքում Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների գտնվելու կարգի մասին համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» և «ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության տարածքում աշխատող ՀՀ քաղաքացիների և ՀՀ տարածքում աշխատող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին» համաձայնագրի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրության կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» ՀՀ Նախագահի աշխատակազմի եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

010-19479
«27» 06 2014 թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Ռուսաստանի Դաշնության տարածքում ՀՀ քաղաքացիների և ՀՀ տարածքում Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների գտնվելու կարգի մասին համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» և «1994 թվականի հուլիսի 19-ի «ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության տարածքում աշխատող ՀՀ քաղաքացիների և ՀՀ տարածքում աշխատող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին» համաձայնագրի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրության կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» */այսուհետ՝ Նախագծեր/* ՀՀ կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ

Նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալ նկատառումները.

1. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ աշխատողի աշխատանքային գործունեությունը ձևակերպվում է աշխատանքի տեղավորման պետության աշխատանքային օրենսդրության համաձայն գործատուի հետ կնքված աշխատանքային (վարձակալության) պայմանագրով: Գործատուն (վարձատուն) իրազեկում է լիազորված մարմիններին կնքված աշխատանքային (վարձակալության) պայմանագրերի մասին: Կնքված աշխատանքային (վարձակալության) պայմանագիրը հիմք է աշխատանքի տեղավորման պետության տարածքում աշխատողի և նրա ընտանիքի անդամների ժամանակավոր գտնվելու ժամկետը երկարաձգելու համար՝ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետով՝ առանց աշխատանքի տեղավորման պետության սահմաններից դուրս գալու, բայց ոչ ավել քան մեկ տարի, որը հաշվարկվում է աշխատանքի տեղավորման պետության տարածք մուտք գործելու օրվանից:

Գտնում ենք, որ քննարկման և վերանայման կարիք ունի աշխատանքի տեղավորման պետության սահմաններից դուրս չգալու նշված սահմանափակման կիրառումը աշխատողի և նրա ընտանիքի անդամների նկատմամբ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս պարագայում սահմանափակվում է վերջիններիս գործուղման, արտերկրում հանգստի, հայրենիք այցելելու և առհասարակ ազատ տեղաշարժման իրավունքը:

2. Նախագծով սահմանված չեն վերոնշյալ սահմանափակումը խախտելու իրավական հետևանքները և դրանց հետագա կարգավորման ընթացակարգը:

3. Նախագծով սահմանված չէ նաև աշխատանքի տեղավորման պետության տարածքում աշխատողի և նրա ընտանիքի անդամների ժամանակավոր գտնվելու ժամկետը (1 տարին) լրանալու դեպքում վերջինիս երկարաձգման իրավական ընթացակարգը՝ աշխատողի աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգելու պարագայում:

4. Վերոնշյալ նախաձերի համապատասխան հոդվածներով նախատեսվում է դրանց **ժամանակավորապես կիրառում**, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրությանը և «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին: Մասնավորապես Սահմանադրության 6-րդ հոդվածով նախատեսվում է, որ միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: